

ABB - ԲԻՉՆԵՍ

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող վարկերի,
վարկային գծերի և օվերդրաֆտների պայմաններն ու սակագները

1	Պայմաններ	Վարկ	Վարկային գիծ	Օվերդրաֆտ
1.1	Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի		
1.2	Տարեկան անվանական տոկոսադրույք	<ul style="list-style-type: none"> • ՀՀ դրամ՝ սկսած 8% • ԱՄՆ դոլար՝ սկսած 6% • ԵՎՐՈ՝ սկսած 6% • ՌԴ ռուբլի՝ պայմանագրային 		<ul style="list-style-type: none"> • ՀՀ դրամ՝ սկսած 9% • ԱՄՆ դոլար՝ սկսած 7% • ԵՎՐՈ՝ սկսած 7% • ՌԴ ռուբլի՝ պայմանագրային
		Առաջնակարգ ապահովվածության (Ավանդային և բանկային հաշվիվներում առկա դրամական միջոցներ, առարկայազուրկ մետաղական հաշիվներում առկա միջոցներ և պետական պարտատոմսեր) դեպքում՝ ապահովվածության միջոց հանդիսացող սեփական միջոցների ներգրավման դրույք (այդ թվում՝ պարտատոմսի եկամտաբերության տոկոս) + 3%		
1.3	Զօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող տոկոսադրույք	-	0-2%	-
1.4	Պարտավորություն/ գրավ հարաբերակցություն	<ul style="list-style-type: none"> • Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, պետական պարտատոմսերի (ՊՊ) դեպքում՝ մինչև 100%-ի չափով, ընդ որում՝ նույն արժույթի դրամական միջոցների, ՊՊ-ի դեպքում՝ մինչև 100%-ի չափով, տարբեր արժույթների դեպքում՝ մինչև 95%-ի չափով, • Առարկայազուրկ մետաղական հաշիվներում առկա միջոցների դեպքում՝ մինչև 100%-ի չափով, • Անշարժ գույքի դեպքում՝ մինչև 70%-ի չափով, • Շարժական գույքի դեպքում՝ մինչև 50%-ի չափով, • Ապրանքանյութական պաշարների դեպքում՝ մինչև 30%, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 30%, • Դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավելի, քան բանկային հաշիվներով իրականացվող վերջին 12 ամիսների միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության 50 տոկոսի չափով: Տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 		Առավելագույնը միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության 50%-ի չափով: Միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառությունը հաշվարկվում է վերջին 12 ամսվա կտրվածքով, իսկ 12 ամսից պակաս Բանկի հաճախորդ լինելու պարագայում՝ վերջին 6 ամսվա կտրվածքով:

		80%: Միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառությունը հաշվարկվում է վերջին 12 ամսվա կտրվածքով, իսկ 12 ամսից պակաս Բանկի հաճախորդ լինելու պարագայում վերջին 6 ամսվա կտրվածքով:	
1.5	Ժամկետ	1- 120 ամիս	1-12 ամիս
1.6	Մարման եղանակ	Տոկոսները՝ ամենամսյա, մայր գումարի մարումները՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից	Տոկոսները՝ ամենամսյա, օվերդրաֆտի մարումները՝ ամենամսյա զրոյացման պայմանով
1.7	Գումար	500,000- 500,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	
1.8	Վաղաժամկետ մարման միջնորդավճար	Մինչև վարկի/չվերականգնվող վարկային գծի գործողության ժամկետի կեսը վաղաժամկետ մարման դեպքում (բացառությամբ այն դեպքերի, երբ մարումը կատարվում է բանկի պահանջով)՝ վաղաժամկետ մարվող մայր գումարի 1,5 տոկոսի չափով: Վերականգնվող վարկային գծի և Օվերդրաֆտի դեպքում՝ չի կիրառվում:	
1.9	Լրացուցիչ պայմաններ	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերի վարկի, վարկային գծի և օվերդրաֆտի տրամադրման պայմանները սահմանվում են պայմանագրային սկզբունքով:	
2	Բանկի միջնորդավճար		
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար	10,000 ՀՀ դրամ (առաջնակարգ ապահովվածության դեպքում չի կիրառվում)	
2.2	Սպասարկման միջնորդավճար	Պայմանագրի գումարի 0,5% (առաջնակարգ ապահովվածության դեպքում չի կիրառվում)	Օվերդրաֆտի գումարի 1% (առաջնակարգ ապահովվածության դեպքում չի կիրառվում)
2.3	Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	Համաձայն հաշվից միջոցների կանխիկացման Բանկում գործող սակագների	Չի թույլատրվում
3	Ապահովվածություն		
3.1	Գրավի առարկա	Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ, անշարժ և շարժական գույք, հիմնական միջոցներ, երաշխիքներ և երաշխավորություններ, արժեթղթերի գրավ, բաժնետոմսի գրավ, բաժնեմասի գրավ, փայի գրավ, դրամական հոսքեր (դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք), շրջանառու միջոցներ, իրավունքի գրավ, խառը գրավ և Բանկի կողմից ընդունելի այլ գրավ:	Դրամական հոսքեր (դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք), անհրաժեշտության դեպքում՝ Բանկի կողմից ընդունելի այլ գրավ:
3.2	Լրացուցիչ պայման	Բնակելի նշանակության անշարժ գույքի գրավադրման ժամանակ Գրավատուն ներկայացնում է սեփականության իրավունքի ծագման հիմքերը, և եթե դրանք Գրավատուին են փոխանցվել նվիրատվության գործարքի հիման վրա և սեփականությունը փոխանցվել է Վարկի	

		<p>ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացնելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, ապա.</p> <p>1. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ նվիրատուի երաշխավորություն, ընդ որում տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 50%-ը, կամ</p> <p>2. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ երրորդ անձի երաշխավորություն, ընդ որում վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 25%-ը:</p> <p>* սույն ենթակետը կիրառելի չէ, եթե Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացման պահին նվիրատուն մահացած է:</p>	
3.3	Պարտադիր պայման	<ul style="list-style-type: none"> ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ մասնակցի (մասնակիցների) 100% բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի պարտադիր գրավադրում: ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ 10% և ավել բաժնետոմս, բաժնեմաս, փայ ունեցող մասնակցի (մասնակիցների) կողմից երաշխավորության պարտադիր տրամադրում: 	
4	Գրավի գնահատում և ապահովագրություն		
4.1	Գրավի արժեքի գնահատում	<p>Անշարժ և շարժական գույքերի, հիմնական միջոցների, շրջանառու միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից:</p> <p>Արժեթղթերի, Բանկի կողմից ընդունելի այլ գույքերի և իրավունքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության:</p>	Ըստ անհրաժեշտության
4.2	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության	
5	Վարկառուի նկատմամբ պահանջներ		
5.1	Վարկառու	Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր	
5.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	<p>ա) Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,</p> <p>բ) Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ՝ ոչ ավել, քան 30 օր (եթե Վարկառուի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 2 օրը՝ կուտակային սկզբունքով),</p>	

		գ) Միայն դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի գրավով բիզնես վարկի դեպքում՝ տրամադրման վերաբերյալ հարցի քննարկման ամսաթվից առաջ վերջին 3 ամիսների ընթացքում Բանկում՝ Բանկի կողմից ընդունելի չափով նվազագույն զուտ կրեդիտային շրջանառության առկայություն:
5.3	Լրացուցիչ պայման	Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքում ստացվող ֆինանսական ցուցանիշները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:
6	Երաշխավորի նկատմամբ պահանջներ	
6.1	Երաշխավոր	ՀՀ-ում կամ ԱՀ-ում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
6.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	<ul style="list-style-type: none"> • Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր և 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 30 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), (եթե Երաշխավորի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 2 օրը՝ կուտակային սկզբունքով):
7	Լրացուցիչ պայմաններ	
7.1	Ժամկետանց գումարի տոկոսադրույք	ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկ
7.2	Ժամկետանց տոկոսի տույժ	0,13% օրական